



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՅ  
 ՎԱՅԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՑԵԼԵՑ**

Հայաստանի Ազգային Ժողովի փոխ նախագահ, Յ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի անդամ եւ նախագահութեան թեկնածու Տիար Վահան Յովհաննէսեան Շաբաթ, 15 Դեկտեմբերի կէսօրին այցելեց Ազգային Առաջնորդարան եւ դիմաւորուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ժողովականութեան ներկայացուցիչներուն կողմէ:

Հայրենի հիւրին կ'ընկերանար Յ.Յ.Դ. Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան եւ անդամներէն Տիար Ժան Գոսաքեան: Ներկայ էին Կրօնական Ժողովի, Ազգային Վարչութեան ներկայացուցիչները, ծխական շրջաններու հոգեւոր հովիւներ, հոգաբարձութեանց ատենապետներ, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինի ու Ազգ. Առաջնորդարանի կարգ մը յանձնախումբերու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Տիկնանց Օժանդակ Մարմինի եւ Ազգ. Առաջնորդարանի անձնակազմի անդամներ:

Առաջնորդ Սրբազանն ու հիւրերը առաջին հերթին ուղղուեցան «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատուռը, ապա բարձրացան Ազգ. Առաջնորդարանի դահլիճը, ուր տեղի ունեցաւ պաշտօնական հանդիպումը: Առաջնորդ Սրբազանը ողջունեց Տիար Վահան Յովհաննէսեանի ներկայութիւնը այս յարկին տակ, որ աննախընթաց չէ, սակայն ան առաջին անգամ ըլլալով է որ կ'այցելէ Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքը: Ան հակիրճ կերպով անդրադարձաւ Ազգ. Առաջնորդարանի գործունեութեան ու ծրագիրներուն, որոնք նոր հորիզոններու առջեւ կը գտնուին այժմ: Ողջոյնի խօսք ուղղեց ու բարեմաղթութիւններ կատարեց նաեւ Ազգ. վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան:

Տիար Վահան Յովհաննէսեան գոհունակութեան ու շնորհաւորանքի խօսքերով ընդառաջեց յիշեալ արտայայտութեանց, նկատելով, որ Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքը յարմարաւետ պայմաններ պիտի ստեղծէ Ժողովուրդը առաջնորդելու գործին մէջ: Ան անդրադարձաւ Հայաստանի ու հայութեան դիմագրաւած այժմու հանգրուանին եւ վեր առաւ միասնութեան, գործակցութեան ու արդիւնաւոր գործի հրամայականները. ան նկատեց, որ արտերկրի հայութեան ղեկը առաջնորդելու յանձնառութիւնը ունեցողները լաւապէս գիտակից են իրենց դերին ու առաքելութեան, կարելի լաւագոյնը ի գործ կը դնեն անոր իրագործման համար, եւ Ազգային Առաջնորդարանին նման հաստատութիւններ կը հանդիսանան Ժողովուրդը մեր ազգային ու հաւաքական կարիքներուն

կապող, անոնց գոհացում տուող կեդրոնները: «Կազմակերպուած ըլլալը եւ կազմակերպ գործ տանիլը հրամայական են», ընդգծեց ան: Ան նաեւ անդրադարձաւ խորհրդային տարիներուն տիրապետած հակակրօն մթնոլորտին ու նոր ժամանակներուն ի յայտ եկած աղանդաւորական խմբակներու, նկատել տալով, որ այս վիճակներուն դարմանումին մէջ հիմնական դեր ունի մեր ազգային եկեղեցին:

Տիար Աւետիք Իզմիրլեան շնորհակալութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին եւ հիւրընկալ ժողովականութեան, որ այս հանդիպումին առիթը կը ստեղծուի: Ան յայտնեց, որ Ազգ. Առաջնորդարանին ու Հ.Յ.Դ.ի միջեւ ստեղծուած սերտ յարաբերութիւնները գրաւական են ազգանուէր աշխատանքներու յաջողութեան: Ան յայտնեց, որ ինք անձամբ ներկայ եղած է այն ժողովին, ուր Տիար Վահան Յովհաննեսեանի նախագահութեան թեկնածութիւնը որոշուած է, եւ այդ քայլը եղած է ժողովրդավարութեան լաւագոյն արտայայտութիւնը:

Հանդիպումի պաշտօնական բաժինի աւարտին, Առաջնորդ Սրբազանը յուշանուէր մը յանձնեց Տիար Վահան Յովհաննեսեանի, ապա, Տիկնանց Օժանդակ Մարմինը ներկաները հիւրասիրեց ճաշով, որուն ընթացքին, մտերմիկ գրոյց տեղի ունեցաւ հայրենի հիւրին ու հիւրընկալներուն միջեւ:

Աւելի քան մէկ ու կէս ժամ տեւած հանդիպումի աւարտին, ներկաները բարի երթ ու յաջողութիւն մաղթեցին Տիար Վահան Յովհաննեսեանի:

## **VICE SPEAKER OF THE ARMENIAN PARLIAMENT VAHAN HOVANNESIAN VISITS THE WESTERN PRELACY**

On Saturday, December 15<sup>th</sup>, Vice Speaker of the Armenian Parliament and ARF Bureau member Vahan Hovannesian visited the Western Prelacy where he was greeted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and council members. Mr. Hovannesian was accompanied by ARF Central Committee representative Mr. Avedik Izmirlian and member Mr. John Kossakian.

Also in attendance were representatives of the Religious and Executive Councils, clergy members, Boards of Trustees Chairmen, members of the Board of Regents and Prelacy committees, Ladies Auxiliary, and staff.

Upon their arrival the Prelate and guests first headed to the “St. Dertad and St. Ashkhen” Chapel after which they proceeded to the reception room where the official meeting took place. The Prelate welcomed Mr. Hovannesian on his first visit to the Prelacy and briefly described the activities and the various projects undertaken by the Prelacy. Welcoming remarks were also offered by Executive Council Chairman Dr. Garo Agopian.

Mr. Hovannesian began his remarks by conveying thanks and appreciation for the sentiments expressed. He continued by acknowledging the challenges Armenia and the Armenian people are currently facing and the need for unity and collaboration. He stated that those in a leadership position are well aware of their role and mission and spare no effort in the realization of their

endeavors, continuing that the Western Prelacy is one of those institutions that provides for the individual and collective needs of our people. Mr. Hovannesian also spoke of the secularization of Armenia during Communism and the rise in the number of sects in the present day, stating that our national church has a vital role in the remedying of this situation.

Mr. Avedik Izmirlian thanked the Prelate for the reception and stated that the partnership between the Prelacy and the ARF contributes to the successful realization of our collective endeavors.

At the conclusion of the official meeting the Prelate presented Mr. Hovannesian with a memento, after which the guests enjoyed the reception prepared by the Ladies Auxiliary.